ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 4

«24» 01 2020 թ. ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՌԿԱ ԶԵՆՔԻ ԵՎ ԱՆՁՆԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՈՒՅՔԱԳՐՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2018 թվականի ապրիլի 12-ի՝ «Ծառայողական հաշվեցուցակային զենքը և անձնական պաշտպանության հատուկ միջոցները պահելու և կրելու կարգը սահմանելու և Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2007 թվականի դեկտեմբերի 21-ի N 88 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 33 հրամանով հաստատված կարգի 34-36-րդ կետերը, Հայաստանի Հանրապետության դատախազությունում առկա զենքի և անձնական պաշտպանության հատուկ միջոցների լիակատար ստուգում՝ գույքագրում կատարելու նպատակով, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ և 11-րդ կետերով ու 30-րդ հոդվածի 3-րդ մասով՝

Հրամայում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության դատախազությունում առկա զենքի և անձնական պաշտպանության հատուկ միջոցների լիակատար ստուգում՝ գույքագրում (այսուհետ՝ գույքագրում) կատարելու նպատակով ստեղծել հանձնաժողով՝ հետևյալ կազմով՝

Համլետ Գրիգորյան -	Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարի տեղակալ
Սարգիս Թարխանյան-	Հայաստանի Հանրապետության դատախազության տեղեկատվական տեխնոլոգիաների սպասարկման և անվտանգության ապահովման վարչության պետ

Լևոն Բաղդասարյան -	Հայաստանի Հանրապետության դատախազության առաջին բաժնի պետ
Թամարա Գևորգյան -	Հայաստանի Հանրապետության դատախազության առաջին բաժնի գլխավոր մասնագետ:

2. Հանձնաժողովին՝ համաձայն հաշվառման տվյալների և հաշվառման ու պահպանության ապահովման կարգի՝

1) Կատարել գույքագրում և դրա արդյունքում կազմված տեղեկանքը մինչև 2020 թվականի փետրվարի 20-ը ներկայացնել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազին,

2) Յուրաքանչյուր հաջորդ տարի, մինչև հունվարի 15-ը, կատարել գույքագրում և դրա արդյունքում կազմված տեղեկանքը մինչև տվյալ տարվա փետրվարի 20-ը ներկայացնել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազին:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

4. Սույն հրամանի կատարման վերահսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը:

5. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին և ավագ դատախազներին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին և ավագ դատախազներին, մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին ու օգնականներին, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին:

Ա.ԴԱՎԹՅԱՆ